

## **Անտացիա**

**Ամփոփում.** Ժամանակակից բջջային կենսաբանությունը միջդիսցիպլինար առարկա է, որը նկարագրում է բջիջների կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունները՝ գենետիկական, կենսաքիմիական, ֆիզիոլոգիական և պաթոֆիզիոլոգիական տեսանկյուններից: Դասընթացի ընթացքում ուսանողները կծանոթանան բջջային և արտաբջջային կառուցվածքների փոխազդեցությունների մոլեկուլային մեխանիզմներին, որոնք ապահովում են բջիջների աճը, տարբերակումը, ծերացումը և մահը: Կներկայացվեն նաև բջիջների բնականոն կենսագործունեության խաթարման մեխանիզմները, որոնք հանգեցնում են բջիջների չարորակ վերափոխման կամ այլ պաթոֆիզիոլոգիական վիճակների: Բացի հիմնարար գիտելիքներից, այս դասընթացի շրջանակում կներկայացվի նաև բջջային կուլտուրաների կիրառման ոլորտները, ինչպիսիք են in vitro թունաբանությունը, դեղամիջոցների մշակումը, հյուսվածքների ճարտարագիտությունը, ցողունային բջիջները, պատվաստանյութերի և մոնոկլոնալ հակամարմինների արտադրությունը: Գործնական պարապմունքների ընթացքում ուսանողները կծանոթանան բջիջների կուլտուրաների հետ աշխատելու հիմնական տեխնիկային, ախտորոշիչ և թունաբանական մեթոդներին:

**Առարկայի նպատակը.** Ուսանողների մոտ բջիջների կենսագործունեության վերաբերյալ ժամանակակից պատկերացումների ձևավորում, որոնք ներառում են բջիջների կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունների նկարագրությանը՝ հիմնված գենետիկական, կենսաքիմիական, ֆիզիոլոգիական և պաթոֆիզիոլոգիական մեխանիզմների արձարծման վրա: Դասընթացն ուսանողներին կծանոթացնի բջջային կառուցվածքների և կենսաքիմիական ռեակցիաների միջև դիսամիկ փոխհարաբերություններին, որոնք անհրաժեշտ են բջիջների աճի, տարբերակման, կենսագործունեության և մահվան համար:

**Կապը մասնագիտության այլ առարկաների հետ.** Ժամանակակից բջջային կենսաբանությունը միջդիսցիպլինար առարկա է, որը հատվում է գիտական առարկաների լայն շրջանակի հետ, ինչպիսիք են կենսաքիմիան, կենսաֆիզիկան, մոլեկուլային գենետիկան և իմունոլոգիան:

**Ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների նախնական մակարդակների պահանջները դասընթացը անցնելու համար.** Դասախոսությանը մասնակցելու համար ուսանողը պետք է ունենա գիտելիքներ կենսաբանության և քիմիայի հիմունքների վերաբերյալ, ինչպես նաև ունենա անգլերեն լեզվի հիմնական իմացություն: